

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոնեական խոնարհությունը և Քրիստոսի խոնարհությունը	Միաբանություն խոնարհության միջոցով	Խոնարհությունը և Քրիստոսի օրինակը	Քրիստոսի խոնարհությունը և մեծությունը	Պահեք միաբանությունը և խոնարհությունը
2:1-11	2:1-4 Խոնարհ և մեծարված Քրիստոսը 2:5-11	2:1-11	2:1-11	2:1-11
Լույսերի պես փայլել աշխարհում	Լույսը կրողները		Լույսերի պես փայլել աշխարհում	Փրկության գործը
2:12-18	2:12-18	2:12-13 2:14-18	2:12-13 2:14-16 2:17-18	2:12-18
Տիմոթեոսը և Եպափրոդիտոսը	Տիմոթեոսի գովքը	Տիմոթեոսը և Եպափրոդիտոսը	Տիմոթեոսը և Եպափրոդիտոսը	Տիմոթեոսի և Եպափրոդիտոսի առաքելությունը
2:19-24	2:19-24 Եպափրոդիտոսի գովքը	2:19-24	2:19-24	2:19-3:1ա
2:25-30	2:25-30	2:25-3:1ա	2:25-30	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրույթը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Այս համատեքստը ակնհայտ կերպով կապ ունի գրքի թեմաներից մեկի հետ՝ «Փիլիպպեոսյան Քրիստոնյաների միջև միաբանության կոչի» (տես՝ Փիլ. 1:27, 2:1-4, 4:2-3,5,7,9 և Եփ. 4:1-6):
- Բ. Մեկնաբանների շրջանում շատ քննարկումներ են եղել Քրիստոսին ուղղված այս սքանչելի օրհներգի շուրջ (տես՝ Փիլ. 2:6-11), որը առնչվում է բարոյագիտության ու փրկությանը:
1. Այն գործում է որպես օրինակ հավատացյալների համար սպրելու անձնուրաց և անձնանվեր կյանքեր (տես՝ Փիլ. 2:1-5):
 2. Այն նաև գործ ունի նախագոյ մամնացած Մեսիայի խոնարհության և մեծարման հետ:
 3. Տարբեր կերպերով այն գործում է երկու ոլորտներում էլ:
- Գ. 2:6-11 կարծես թե հին Քրիստոնեական օրհներգ է՝
1. կառուցվածքը համաչափ, բանաստեղծական կամ լիրիկական է
 2. բովանդակում է մի քանի հազվադեպ հունարեն տերմիններ, որոնք Պողոսը չէր կիրառում
 3. այստեղ բացակայում են Քրիստոսի վերաբերյալ Պողոսին հատուկ մի քանի աստվածաբանական տարրերը
 4. Պողոսը մեջբերում է այլ վաղ եկեղեցու օրհներգեր, պոեմներ կամ շարական ստեղծագործություններ 1 Տիմ. 3:16 և 2 Տիմ. 2:11-13-ում
 5. այլ կարծիքների համար տես՝ Գորդոն Ֆիլի, *Ինչի՞ է հանգեցնում բացատարական քարոզը*, էջ՝ 1731-1890:
- Դ. Քրիստոսին ուղղված այս օրհներգի կառուցվածքը տարաձայնությունների է արժանացել:
1. Հիսուսի անձը և գործը
 - ա. նախագոյությունը, Փիլ. 2:6
 - բ. մարմնացումը, Փիլ. 2:7
 - գ. փոխանորդական մահը, Փիլ. 2:8
 2. Հայր Աստծո պատասխանը՝
 - ա. տիեզերական Տիրակալությունը, Փիլ. 2:9
 - բ. տիեզերական դավանությունը, Փիլ. 2:10
 - գ. գերագույն տիտղոսը (Տեր), Փիլ. 2:11
- Ե. Քրիստոսին ուղղված այս սքանչելի օրհներգի համառոտ ուրվագիծը՝
1. 6-8 համարները՝
 - ա. Քրիստոսի խոնարհությունը
 - բ. ՀԿ-յան հիմքը Ծննդոց 3-րդ գլուխն է (Ադամ՝ Քրիստոսի տիպաբանություն)
 - գ. Կենտրոնանում է Հիսուսի գործերի վրա
 2. 9-11 համարները՝
 - ա. Քրիստոսի մեծարումը
 - բ. ՀԿ-յան հիմքը Եսայի 52:13-53:12 է (Չարչարվող Ծառան)
 - գ. Կենտրոնանում է Հայր Աստծո գործերի վրա
 3. Աստվածաշնչերը, որոնք տպագրում են բանաստեղծականը արձակից տարբեր, շատ կարևոր է, որպեսզի տեսնեն համաչափությունը և հանգավորումները (տես՝ NRSV, TEV, NJB):
2. Այս Քրիստոսաբանական օրհներգի մեջ առկա հիմնական ճշմարտությունները՝
1. Հիսուսը ճշմարտապես Աստված է (էությանը, *morphē*)
 2. Հիսուսը ճշմարտապես մարդ է (կերպարանքով, *schēma*)

3. Հիսուսը ճշմարտապես մեր բարին է փնտրում, ոչ թե Իրենը, և Քրիստոնյաները պետք է այդպես վարվեն
4. Հիսուսն է երկրպագության արժանի իրական անձը՝ Հոր կամքով

Է. Օրհներգը Պողոսի ձեռագիրը չէ՝

1. Այստեղ բացակայում է հարությունը, որը Պողոսի գլխավոր և կրկնվող շեշտադրությունն էր
2. Այստեղ բացակայում է Հիսուսի Եկեղեցու հետ ունեցած կապի Պողոսի մշտական շեշտադրությունը
3. Այն կիրառում է մի քանի տերմիններ, որոնք Պողոսի կողմից ոչ մի տեղ չի գործածվում
4. Պողոսը մեջբերում է վաղ շրջանի այլ եկեղեցական օրհներգներ, շարականներ կամ դավանաբանական պոեմներ 1 Տիմ. 3:16, 2 Տիմ. 2:11-13 և հավանաբար Կող. 1:15-20, 1 Տիմ. 1:17, 6:15-16-ում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2:1-11

¹Ուստի եթե Քրիստոսով որևէ մխիթարություն կա, սիրո սփռվածք, Հոգու հաղորդություն, գթասրտություն և ողորմություն, ²ապա իմ ուրախությունը կատարյալ դարձրեք՝ միաբան լինելով, նո՛ւյն սերը ունենալով՝ մեկ հոգով ու մեկ մտքով: ³Թող ո՛չ մի բան հակառակությամբ կամ սնափառությամբ չարվի, այլ խոնարհությամբ ամեն մեկը մյուսին իրենից ավելի լավը համարի: ⁴Ձեզնից յուրաքանչյուրը միայն իր շահը չփնտրի, այլ նույնպես՝ ուրիշների շահը: ⁵Նույն միտքը թող լինի ձեր մեջ, ինչ Քրիստոս Հիսուսի մեջ է. ⁶Որ Աստծո կերպարանքն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, ⁷այլ Իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման եղավ. ⁸և մարդու կերպարանքով լինելով՝ Ինքն Իրեն խոնարհեցրեց, մահվանը հնազանդվեց, անգամ խաչի մահվան: ⁹Դրա համար էլ Աստված Նրան խիստ բարձրացրեց և Նրան տվեց մի անուն, որ բարձր է բոլոր անուններից, ¹⁰որ Հիսուսի անվան առաջ ամեն մի ծունկ խոնարհվի, երկնքում, երկրի վրա, և երկրի տակ, ¹¹և ամեն լեզու խոստովանի, թե՛ Հիսուս Քրիստոսը Տէր է Հայր Աստծո փառքի համար:

2:11 «Եթե» Սա առաջինն է չորս առաջին կարգի պայմանական նախադասությունների շարքում, որոնք ենթադրվում են, որ ճիշտ են հեղինակի տեսանկյունից կամ ելնելով նրա գրական նպատակներից: 1-4 համարները հունարենում մեկ նախադասություն է:

❖ **«Քրիստոսով/ում որևէ մխիթարություն կա»** Այս տերմինը կարելի է թարգմանել մի քանի կերպ՝ «խթան», «կոչ», «մխիթարություն», «քաջալերանք» կամ «հորդոր»: Այս նախադասությունը նման է վարքի մասին Պողոսի քննարկմանը, որը միաբանություն է բերում և պահպանում Քրիստոսի տեղական մարմինների մեջ Եփես. 4:23-ում:

«Քրիստոսում» (ներգոյական) խոսքը հավատացյալների ինքնությունը նկարագրելու Պողոսի կողմից ամենաշատ օգտագործվող կերպն է: Կյանքի, իրական կյանքի, լիառատ կյանքի համար հավատացյալները պետք է հավատքով Քրիստոսի հետ կենսական միության մեջ մնան (տես՝ Հովհաննես 15):

❖ **«որևէ սիրո սփռվածք»** Սերը միշտ եղել է Քրիստոնեական կյանքի համար արմատը և պտուղը (տես՝ Հովհ. 13:34-35, 15:12,17, 1 Կորնթ. 13, Գաղ. 5:22, 1 Հովհ. 3:11,27, 4:7-21): Հիսուսն ապրում էր սիրով, սովորեցնում էր սիրել և պատվիրեց սիրել Իր հետևորդներին:

❖ **«որևէ Հոգու հաղորդություն»** Սա հունարեն *koinōnia* տերմինն է, որը նշանակում էր «մասնակցություն» (տես՝ 2 Կորնթ. 13:14): Դարձյալ հարց է առաջանում. «Արդյո՞ք սա վերաբերում է հավատացյալների նոր փրկված, մարդկային հոգուն, որը լիցքավորված է Սուրբ Հոգով», թե՛ «իրենց

տրված Սուրբ Հոգուն»: «Հոգի» տերմինի հետ որոշիչ հոդ չկա: Հնարավոր է սա դիտավորյալ անորոշություն է: Աստվածաբանորեն այն կարող է երկուսին էլ վերաբերել:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. KOINŌNIA (ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
SPECIAL TOPIC: KOINŌNIA (FELLOWSHIP)**

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է՝

1. անձի հետ մտերմիկ շփում
ա. Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:6, 1 Կորն.1:9)
բ. Հոգու հետ (տես՝ 2 Կորն.13:13, Փիլ.2:1)
գ. Հոր և Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:3)
դ. Ուխտի մեջ գտնվող այլ եղբայրների և քույրերի հետ (տես՝ 1 Հովհ.1:7, Գործք 2:42, Գաղ.2:9, Փիլիմոն հ. 17, 1 Հովհ. 1:3,7)
ե. ոչ թե չարի հետ (տես՝ 2 Կորնթ. 6:14)
2. մտերմիկ շփում ինչ-որ բաների կամ խմբերի հետ՝
ա. ավետարանի հետ (տես՝ Փիլ.1:5, Փիլիմոն 6)
բ. Քրիստոսի արյան հետ (տես՝ 1 Կորն.10:16)
գ. ոչ խավարի հետ (տես՝ 2 Կորն.6:14)
դ. չարչարանքի հետ (տես՝ 2 Կորնթ. 1:7, Փիլ.3:10, 4:14, 1 Պետ.4:13)
3. ընծա կամ նվիրատվություն՝ առատաձեռնությամբ (տես՝ Հռոմ.12:13, 15:26, 2 Կորն.8:4, 9:13, Փիլ.4:15, Եբր.13:16)
4. Քրիստոսի միջոցով Աստծո շնորհքի պարգևը, որը վերականգնում է մարդկության փոխհարաբերությունը Նրա հետ և Իր քույրերի, եղբայրների հետ:

Սա հաստատում է հորիզոնական փոխհարաբերությունը (մարդ - մարդ), որը բխում է ուղղահայաց փոխհարաբերությունից (մարդ-Արարիչ): Այն նաև շեշտադրում է Քրիստոնեական համայնքում փոխհարաբերության կարիքը և ուրախությունը (այսինքն՝ Եբր. 10:25):

❖ **«որևէ զբասարտություն»** Սա բառացի նշանակում է «աղիներ», որը նաև կիրառվում է Փիլ. 1:8-ում: Հնում մարդիկ հավատում էին, որ ստորին կոնքը (որովայնը) զգացմունքների գտնվելու վայրն է: Այս երկու տերմինները նաև օգտագործվում են Կող. 3:12-ում:

❖ **«ողորմություն»** Պողոսն այս տերմինը չորս անգամ օգտագործում է՝ (1) նկարագրելու Աստծո բնավորությունը (տես՝ Հռոմ. 12:1, 2 Կորնթ. 1:3) և (2) նկարագրելու, թե ինչպես պետք է Քրիստոնեյաները վարվեն իրար հետ (տես՝ Փիլ. 2:11, Կող. 3:12): Աստված կամենում է Իր բնավորությունը (պատկերը) վերարտադրել Իր զավակների մեջ: Անկման ժամանակ մարդու կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է Հիսուսի գալստյան ամբողջ նպատակը:

2:2 «իմ ուրախությունը կատարյալ դարձրեք» Սա անդեմ ներգործական հրամայական է և ցույց է տալիս, թե ինչպես էր Պողոսը պատկերացնում այս հավատացյալներին, չնայած որ գտնվում էր նրանցից հեռու՝ բանտում: Նրանց գործերն ու որոշումները Պողոսին ուրախություն կամ ցավ էին պատճառում:

❖ **«լինելով մեկ մտքի»** Սա ներկա ներգործական ստորադասական է, որը սահմանվում է ներկա ժամանակի չորս դերբայներով (հավանաբար որպես հրամայականներ գործածվող) սկսած Փիլ. 2:2-ից և շարունակվող մինչև Փիլ. 2:4: Դրանք գործ ունեն ամենաաղժվար պրագմատիկ հարցի հետ՝ Քրիստոնեական փոխհարաբերության մեջ միաբանությունը պահպանելը (տես՝ Հռոմ. 14:1-15:13, 1 Կորնթ. 8:1-13, 10:23-33): Պողոսի ուղեցույցները կենսական կարևորության են ոչ միայն առաջին դարի Փիլիպպեի եկեղեցու համար, այլ բոլոր դարերի Եկեղեցու համար: Չորս դերբայները հետևյալն են՝

1. նույն սերն ունենալով

2. միաբան լինելով հոգով և մեկ նպատակի վրա կենտրոնանալով
3. ամեն մեկը մյուսին իրենից ավելի լավը համարելով
4. ուրիշների շահը փնտրելով

Զգույշ մնացեք անհատապաշտ կրոնից: Քրիստոնեությունը ընտանեկան փորձառություն է: Պողոսը հաճախ կիրառում է այս «մտածել» (*phroneō*) տերմինը Փիլիպպեցիներում, որը դառնում է մեկ այլ թեմա (տես՝ Փիլ. 1:7, 2:2 /երկու անգամ/, 3:19, 4:2, 4:10):

2:3 «ո՛չ մի բան հակառակությամբ կամ սնափառությամբ չարվի» Սա հնարավոր է նկարագրում է Փիլիպպեի եկեղեցու տիրող իրավիճակը, որը ստեղծել էին սուտ վարդապետները կամ հալածանքը (տես՝ Փիլ. 1:15,17, Գաղ. 5:26): Բայ չկա, սակայն համարի շեշտադրությունը հրամայական է: «Մտածել» բայի կրկնությունը համատեքստում հնարավոր է նկատի է ունենում, որ այս բային պետք է ուշադրություն դարձնել:

❖ **«այլ /մտքի/ խոնարհությամբ»** Խոնարհությունը հունա-հռոմեական աշխարհում ոչ գրավիչ առաքինություն էր, սակայն Քրիստոսը դարձրեց Իր սեփական կյանքի բացառիկ կողմը և կոչ արեց Իր հետևորդներին իրենց Քրիստոնեական կյանքում հետամուտ լինել խոնարհությանը (տես՝ Փիլ. 2:8, Մատթ. 11:29, 1 Պետ. 5:5,6): Այն հանդիսանում է «եսասիրության կամ դատարկ մեծամտության» համատեքստային հակադրությունը:

❖ **«ամեն մեկը մյուսին իրենից ավելի լավը համարի»** Սա ներկա չեզոք (դեպոնենտ) դերբայ է: Սա հակառակ է մեր բնական, մարդկային բոլոր հակումներին, սակայն դա է Աստծո կամքը (տես՝ Հռոմ. 12:10, 1 Կորնթ. 10:24,33, Գաղ. 6:2, Եփես. 5:2): «Ավելի լավը/կարևոր» խոսքի համար տես՝ Հատուկ Թեմա. Պողոսի կողմից *Huper* բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19:

2:4 «ձեզնից յուրաքանչյուրը միայն իր շահը չփնտրի» Սա ժխտական մասնիկով ներկա ներգործական դերբայ է (կիրառված որպես հրամայական), որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում: Դա նշանակում էր «ուշադիր նայել ինչ-որ բանի» (տես՝ 2 Կորնթ. 4:18): «Շահ/օգուտ» տերմինը կարող է վերաբերել (1) իրերի, (2) հոգևոր պարգևների, կամ (3) գործերի: Իրական բանալի խոսքն այստեղ «միայն» բառն է: Այնպես չէ, որ հավատացյալները չպետք է շահ փնտրեն իրենց սեփական գործերում (տես՝ 1 Տիմ. 5:8), այլ չպետք է դրանք դարձնեն առաջնայնություն ուրիշներին բացառելով, հատկապես ուրիշ հավատացյալներին: Հավասարակշիռ այդ վիճակը երևում է Գաղ. 6:1-2-ում: Հավատացյալները պետք է սուր հետևողականություն ցուցաբերեն իրենց հանդեպ, որպեսզի կարողանան նաև հետևողական լինել ուրիշների հանդեպ:

2:5 «նույն միտքը թող լինի ձեր մեջ» Սա ներկա ներգործական հրամայական է: Հավատացյալներին պատվիրված է շարունակել մտածել (*phroneō*) Քրիստոսի նման: Քրիստոնեության նպատակը Քրիստոսանմանությունն է՝ մտքով և գործերով (տես՝ Կող. 3:16): Սրանով Պողոսը բացում է իր մեջբերումը Քրիստոնեական այդ վաղ շրջանի օրհներգի բառերով: Այս բանաստեղծական բաժնում կան մի քանի տերմիններ, որոնք Պողոսի մյուս թղթերում բացակայում են: Նմանատիպ նյութերից Պողոսի կողմից մեջբերված հաստատումներից են Եփես. 5:14, 1 Տիմ. 3:16, 2 Տիմ. 2:11-13 և հավանաբար Կող. 1:15-20, 1 Տիմ. 1:17, 6:15-16:

Քրիստոնյաներին հորդորվում է հետևել Քրիստոսի օրինակին երկու կերպ՝ (1) Նա թողեց իր նախագոյ, աստվածային փառքը և մարդացավ ոչ թե Իր համար, այլ ուրիշների և (2) Նա հոժարակամ մահացավ, ոչ թե Իր մեղքերի, այլ ուրիշների համար: Քրիստոսի հետևորդները պետք է ընդօրինակեն այս անձնվեր, անձնուրաց հատկանիշները (տես՝ 1 Հովհ. 3:16): Մենք մեր եղբայրների պահապան ենք, քանի որ մեր եղբայրը Աստծո պատկերով և նմանությամբ է:

2:6 «Որ Աստծո կերպարանքն ունենալով/ անզլ.՝ չնայած որ Նա գոյություն ուներ» Բառացի սա նշանակում է «Ով լինելով Աստծո պատկերով»: Սա երկու ներկա ժամանակներից (այստեղ որպես դերբայ) մեկն է՝ Անորոշ կատարյալ ժամանակի բայերի և դերբայների շարքում: Այն շեշտադրում է

Հիսուս Նազովրեցու նախագոյությունը (տես՝ Հովհ. 1:1, 8:57-58, 17:5,24, 2 Կորնթ. 8:9, Կող. 1:17, Եբր. 10:5-7): Հիսուսի նախագոյությունը Իր աստվածության ևս մեկ ապացույցն է: Հիսուսը սկիզբ չառավ Բեթլեհեմում: Չի եղել այնպիսի ժամանակ, որ Հիսուսը գոյություն չի ունեցել և աստվածային չի եղել:

❖ «Աստծուն հավասար լինելը / Աստծո էությանը» Սա հունարեն *morphē* բառն է, որը մի քանի իմաստով է գործածվում՝

1. Արիստոտելյան էություն իմաստով
2. ինչ-որ բանի բնույթի իմաստով կամ ինչ-որ բանի անփոփոխ բնության իմաստով (այսպես էին մեկնաբանում վաղ Եկեղեցու հայրերը)
3. ինչ-որ բանի արտաքին տեսքը, ինչպես որ Սեպտուագինտայում (LXX): Սա չի նշանակում, որ ՅԱՀՎԵՆ ունի ֆիզիկական մարմին, այլ որ հենց Հայր Աստծո ճիշտ էության հատկանիշներն ու առանձնահատկությունները Որդի Աստծո մեջ ակնհայտ են:

Սա Քրիստոսի կատարյալ աստվածությունը հաստատելու մեկ այլ եղանակ է: Տես՝ Հատուկ Թեմա. Միաստվածություն, Եփես. 4:6-ում:

❖ «Աստծուն հավասար լինելը չհամարեց» Բառացի սա նշանակում է «հափշտակություն չհամարեց Աստծո հետ հավասար լինելը»: Սա մյուս ներկա ժամանակի բայն է (այստեղ անորոշ): Հունարեն «հավասարություն» տերմինը մուտք է գործում անգլերեն լեզվի մեջ որպես «իզոմետրիկ»: Սա մեկ այլ խոսք է, որով կարող ենք հաստատել Հիսուսի կատարյալ աստվածությունը (տես՝ Հովհ. 1:1, Տիտոս 2:13):

**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

**«մի բան, որը պետք է ընկալել»
«հափշտակություն»
«շահագործվող բան»
«որը ստիպված էր»
«ընկալելու ինչ-որ բան»**

Այս հազվադեպ հունարեն բառը՝ *harpagmos*, սկզբնապես նշանակել է «ինչ-որ բան բռնելու գործողություն» կամ «մրցանակին հասնելու պայքար» (*harpagma*): Այդուհանդերձ այն կարող էր կիրառվել կրավորական իմաստով (հունարեն *mos* վերջավորությամբ), որը նշանակում է «մի բան, որից բռնված ես կամ կառչած»: Երրորդ հավանականությունն է «մի բան, որ ինչ-որ մեկն ունի, սակայն չի օգտագործում անձնական արտոնության համար»: Սա արտացոլվում է Փիլ. 2:7-ի Ֆիլիպպի թարգմանության մեջ՝ «Իր անձը ամեն արտոնություններից զրկած»:

Հիսուսն արդեն իսկ Աստծո հետ լիարժեք հավասար մեկն էր: Այս արտահայտության երկիմաստության աստվածաբանական նպատակը Ադամ-Քրիստոս տիպաբանությունն է, որտեղ Ադամը փորձում է Աստծո հետ հավասարությունը ընկալել՝ ուտելով արգելված պտուղը (տես՝ Ծննդոց 3): Հիսուսը՝ երկրորդ Ադամը (տես՝ Հռոմ. 5:12բ), կատարյալ հնազանդությամբ հետևեց Աստծո ծրագրին, որտեղ մեծարմանը նախորդեց չարչարանքը (տես՝ Եսայի 53):

**2:7
NASB, NRSV, NJB
NKJV
TEV**

**«Ինքն իրեն դատարկեց»
«Իր անձը ունայնացրեց»
«Իր ազատ կամքով տվեց Իր ամբողջ ունեցածը»**

Դերանունը ընդգծված է: Սա հենց Հիսուսի ընտրությունն էր: Մի քանի տեսություններ կան այն խոսքի շուրջ, թե ինչ է նշանակում Հիսուսն Իրեն դատարկեց (տես՝ 2 Կորնթ. 8:9):

1. Պողոսն այս տերմինը կիրառում է մի քանի անգամ (տես՝ Հռոմ. 4:14, 1 Կորնթ. 1:17, 9:15, 2 Կորնթ. 9:3): Ըստ երևույթին Հիսուսն ընտրեց ապրել որպես մարդ: Նա ինքնակամ

թողեց Իր աստվածային փառքը և ընդունեց մարդկային մարմնի սահամանափակումները: Անշուշտ Նա դեռ ուներ ավելի մեծ հասկացողություն և հոգևոր գորություն, քան սովորական մեղավոր մարդկությունը: Նա այն էր, ինչ բոլոր մարդիկ պետք է լինեին:

2. Հիսուսը չդարձավ Աստծուց ավելի փոքր Իր Մարմնավորմամբ, սակայն ըստ երևույթին Նա Իր աստվածությանն ավելացրեց մարդեղություն: Նա թողեց Աստվածային երևացող փառքը և հագավ մարդու երևացող կերպարը: Սա պարունակում էր հավելու և ոչ թե պակասեցում: Հիսուսի երկրավոր ծառայության ընթացքում, Նա լցվեց և գորացավ Հոգով, սակայն Նա նաև կատարյալ Աստված և կատարյալ մարդ էր (փորձվեց՝ Մատթևոս 4, փորձեց՝ Հովհաննես 4, վախեցավ Գեթսեմանի պարտեզում՝ Մարկոս 14:32-42): Նա իսկապես ճանաչում էր և հայտնում էր Հորը (տես՝ Հովհ. 1:18): Նա իսկապես մեկ էր մեր մարդկային էության հետ (տես՝ Հովհաննես 1:4):
3. Հնարավոր է, որ այս դատարկվելը ինչ-որ առումով Եսայի 53:1-3 խոսքերի ակնարկ է: Եթե այդպես է, ապա այն կապ չունի Նրա մարդեղության հետ (Փեղի.2:7-8ա), այլ Նրա խաչելության (Փիլ. 2:8բ) որպես ՅԱՀՎԵԻ ծառան (տես՝ Մարկոս 10:45-15:53):

❖ **«Ծառայի կերպարանք առնելով»** «Աստծո էությունը» արտահայտության գրականական ճշգրիտ համագործն է (տես՝ Փիլ.2:6): «Ծառա» (*doulos*) տերմինն այստեղ հնարավոր է կիրառվել է Եսայի 42:1-9, 49:1-7, 50:4-11, 52:13-53:12-ի Չարչարվող Ծառայի իմաստով: Հիսուսը թողեց Իր երկնային փառքը, փոխելով այն մտուրի հետ (տես՝ 2 Կորնթ. 8:9): Սա նաև Փիլ. 2:9-11-ի հիմքն է: Այս համարը շեշտադրում է Հիսուսի Մարմնացումը (անորոշ կատարյալ դերբայ), ոչ թե Նրա խաչելությունը, որն արտահայտվում է Փիլ. 2:8-ում:

Հիսուսը հստակ ցույց տվեց, որ ճշմարիտ առաջնորդ լինելը, ճշմարիտ իշխանությունը ծառայի սիրտն է: Առաջնորդելու համար մարդը պետք է ծառայի (տես՝ Մարկ. 10:42-45, Մատթ. 20:25-28): Նրա խոնարհությունը ճշմարիտ գորության նշան է: Նրա անձնվեր սերը աստվածության իրական նշան է:

❖ **«մարդկանց նման եղավ»** RSV և NRSV թարգմանությունները այս խոսքը թարգմանում են որպես «ծնվելով»: Սա երկրորդ գլխավոր շեշտադրումն է այս վաղ շրջանի Եկեղեցական օրհներգի՝ Քրիստոսի կատարյալ մարդեղությունը: Սա արվել է, որպեսզի հերքի Գնոստիկ սուտ վարդապետներին, որոնք ընդունում էին հոգու և մատերիայի՝ նյութի միջև հավիտենական (գոյաբանական) դուալիզմը: Հիսուսի երկակի էությունը ՆԿ-յան գլխավոր աստվածաբանական հարցերից է (տես՝ 1 Հովհ. 4:1-6): Հիսուսի ՀԿ-յան «Մարդու Որդի» տերմինի կիրառությունը մատնացույց է անում այս ուղղությամբ: Սաղմ. 8:4 և Եզեկ. 2:1-ում այս տերմինն ունի մարդ անձնավորությանը վերաբերող սովորական հրեական նշանակություն: Այդուհանդերձ, Դան. 7:13-ում այն ստացել է աստվածային հատկանիշներ (այսինքն՝ երկնքի ամպերի վրա հեծնելը և հավիտենական թագավորությունը ստանալը): Հիսուսն այս արտահայտությունը օգտագործեց Իր համար: Այն լայն կիրառություն չունեի ռաբբիների շրջանում և չունեի ռազմական, ազգայնական կամ բացառիկության նշանակություն:

Փիլ. 2:8-ի սկիզբը շեշտադրում է այս նույն աստվածաբանական ճշմարտությունը, միայն այն տարբերությամբ, որ չնայած Հիսուսը կատարյալ մարդ էր, Նա մասնակից չեղավ մարդկության մեղավոր՝ ընկած բնույթին (տես՝ Հռոմ. 8:3, 1 Կորնթ. 5:21, Եբր. 4:15, 7:26, 1 Պետ. 2:22, 1 Հովհ. 3:5):

2:8 «և մարդու կերպարանքով» Թարգմանությունների մեջ որոշակի շփոթություն կա արդյոք այս արտահայտությունը պետք է լինեի համար 7-ում, թե՛ 8-ում: Սա հունարեն *schēma* տերմինն է, որը սովորաբար հակադրվում էր *morphē* տերմինի հետ: Հունական փիլիսոփայության մեջ *morphē* նշանակում էր «ինչ-որ բանի ներքին տեսքը, որն իսկապես արտացոլում է դրա էությունը», մինչդեռ *schēma* նշանակում էր «ինչ-որ բանի արտաքին փոփոխվող տեսքը, որը լիարժեք չէր ներկայացնում վերջինիս ներաշխարհը» (տես՝ 1 Կորնթ. 7:31): Հիսուսը ամեն առումով մեր նման է, միայն թե չունի ընկած մարդկության մեղավոր էությունը:

❖ **«Ինքն Իրեն խոնարհեցրեց, մահվանը հնազանդվեց»** Հնարավոր է սա Սեպտուագինտայի (LXX) Եսայի 53:8 խոսքի թարգմանությունից մեջբերում է: Հիսուսը հետևեց Հոր հավիտենական փրկության ծրագրին (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 3:18, 4:28) անգամ մինչև ֆիզիկական տանջանքները և մահը (անորոշ կատարյալ ներգործական սահմանական և անորոշ կատարյալ դերբայ):

❖ **«անգամ խաչի մահվան»** Իսաչը հրեաների համար գայթակղության քար էր (տես՝ 1 Կորնթ. 1:23): Նրանք չէին սպասում չարչարվող Մեսիայի, այլ հաղթողի: Նաև 2 Օրինաց 21:23-ի պատճառով, որտեղ ասվում է, որ եթե ինչ-որ մեկը հանրային մահապատժից հետո մերկացվում է՝ բացահայտվում, դա Աստծո անեծքի նշան է: Հրեաները չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր իրենց Մեսիան Աստծո կողմից անիծված լինել, բայց սա հենց Գաղ. 3:13-ում արձանագրված ճշմարտությունն է, որ Նա անեծք դարձավ մեզ համար: Չարչարվող Մեսիայի գաղափարը (տես՝ Ծննդ. 3:15, Սաղմ. 22) գարշելի էր նրանց համար: Մինչդեռ այսպես ՅԱՀՎԵՆ լուծեց մարդու մեղքի հիմնահարցը՝ Քրիստոսի փոխանորդական քավության շնորհիվ (տես՝ Եսայի 52:13-53:12, Մարկոս 10:45, Հովհ. 1:29, 1 Պետ. 1:19): Իսաչը ՆԿ-ի կենտրոնական ճշմարտությունն է, որտեղ հանդիպում և միաձուլվում են Աստծո սերն ու արդարությունը:

2:9
MASB, NKJV, NRSV
TEV
NJB

«ուստի»
«Այդ իսկ պատճառով»
«Դրա համար էլ»

ՆԿ-ը Հիսուսին ներկայացնում է երկու կերպ՝ (1) կատարյալ նախագոյ Աստվածություն (տես՝ Հովհ. 1:1-3, 14, 8:57-58, Կող. 1:17) և (2) մեծարված Աստվածություն՝ Նրա հնազանդ, սուրբ երկրավոր կյանքի շնորհիվ (տես՝ Հռոմ. 1:4, Փիլ. 2:9): Վաղ եկեղեցում սա առաջնորդեց ուղղափառ և Որդեգրյալ հավատամքի աստվածաբանների միջև բախումների: Այդուհանդերձ, ինչպես որ շատ հաճախ է լինում, երկուսն էլ ունեին ճշմարտության մի կողմը: Թե ով էր Հիսուսը, հաստատված է Նրա գործերով: Գոյություն չունեն երկու Քրիստոլոգիաներ, այլ միևնույն ճշմարտությունը դիտարկելու երկու կերպեր: Մեր պատասխանը չպետք է լինի փորձելու որոշել, թե որն է ճիշտը, այլ շնորհակալություն հայտնել Աստծուն Քրիստոսի համար ժամանակից առաջ, ժամանակի մեջ և ժամանակից հետո:

❖ **«Աստված Նրան խիստ բարձրացրեց»** Սա մեջբերում է Սեպտուագինտա (LXX) թարգմանության Եսայի 52:13 խոսքից: *Huperupsoō* տերմինի ավելի ուժգնացված տարբերակը ՆԿ-ում միայն այստեղ է և հազվադեպ է աշխարհիկ հունարենում: Տես՝ Հատուկ Թեմա. Պողոսի կողմից Huper Բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19-ում: Սա Որդեգրյալ Քրիստոլոգիա չէ, որը պնդում էր, որ Հիսուսը պարզևատրվեց աստվածությամբ: Հիսուսը վերադարձավ Իր աստվածային նախագոյ փառքին (տես՝ Եփես. 4:10): Հովհաննեսի Ավետարանում Հիսուսի մահը նկատի է առնված որպես Նրա փառավորում (տես՝ Փիլ. 7:39, 12:16, 23, 13:31-32, 16:14, 17:1): Խոնարհ ծառան այժմ Թագավորների Թագավորն է:

❖ **«և Նրան տվեց մի անուն, որ բարձր է բոլոր անուններից»** Այս հատուկ մեծարված անունն է «Տեր» (տես՝ Փիլ. 2:11): Փիլ. 2:9-ում (*echarisato*) բայը նշանակում է «շնորհված», ինչպես Փիլ. 1:29-ում: «Տեր» տերմինը ՀԿ-յան Աստծո ուխտի՝ ՅԱՀՎԵ անվան ակնարկ է (տես՝ Ելից. 3:14, 6:3), որը հրեաները վախենում էին արտասանել, որպեսզի չխախտեն Տաս Պատվիրաններից մեկը (տես՝ Ելից 20:7, 2 Օրինաց 5:11): Հետևաբար, նրանք փոխարինեցին *Ադոն* անվամբ, որը նշանակում է Տեր, սեփականատեր, ամուսին: Հիսուսը, որը եկավ ծառայի կերպարանքով, վերադարձվեց Իր տիեզերական Տիրակալությանը (տես՝ Հովհ. 17:5, Կող. 1:15-20): «Հիսուսն է Տերը» արտահայտությունը հավատքի հանրային, անձնական դավանություն էր վաղ Եկեղեցու համար (տես՝ Հռոմ. 10:9, 1

Կորնթ. 8:6, 12:3): Հիսուս Նազովրեցուն տրվեց Աստվածության գերագույն տիտղոսը՝ անունը (տես՝ Եփես. 1:21 և Եբր. 1:4): Տես՝ Հատուկ Թեմա. Աստվածության անունները, Կող. 1:3-ում:

2:10 «ամեն մի ծունկ խոնարհվի, երկնքում երկրի վրա, և երկրի տակ» Մի օր բոլորը Հիսուսին որպես Տեր կրնդունեն: Միակ հարցը, թե արդյո՞ք դա կանեն ժամանակին և հավատքով, և այդպիսով դառնան Աստծո ընտանիքի մի մասը, թե կանեն դա Տիրոջ Օրը և կդատվեն Նրա կողմից (տես՝ Մատթ. 25:31-48, Հայտն. 20:11-15):

Այս համարում զուգահեռ արտահայտությունները վերաբերում են հրեշտակներին՝ թե՛ ազատ և թե՛ կապված, և մարդկանց՝ թե՛ ողջ և թե՛ մեռած: Բոլոր գիտակից արարածները ընդունելու են Հիսուսին Տեր, սակայն միայն մարդիկ կարող են փրկվել: 10-11 համարները կարծես թե ակնարկ են Եսայի 45:53-ի, որը մեջբերված է Հռոմ. 14:11-ում: Բնագրային համատեքստում ՅԱՀՎԵԻ պաշտամունքը այժմ փոխանցվել է Մեսիային (տես՝ Հովհ. 5:23): ՅԱՀՎԵԻ և Հիսուսի միջև տիտղոսների և ֆունկցիաների փոխանցումը ՆԿ-յան հեղինակների կողմից Հիսուսի կատարյալ աստվածության հաստատման մեկ այլ եղանակ է: Տես՝ Հատուկ Թեմա. Հրեշտակները Պողոսի Թղթերում, Եփես. 6:12-ում:()()()()

2:11 «և ամեն լեզու խոստովանի» Մա անորոշ կատարյալ չեզոք ստորադասականն է (կիրառված որպես ապառնի, որոշ MSS տալիս են ապառնի՝ այսինքն A, C, D, F, G) *exomologeō* տերմինի, որը ընդունում է այն փաստը, որ Քրիստոսի տիրակալությանը հանրային, բառացի ընդունումը լինելու է վերջին ժամանակների իրականություն: Հիսուսի Տիրակալության այս ընդունումը՝ խոստովանությունը, վաղ եկեղեցու հավատքի դավանություն է եղել (այսինքն՝ մկրտության արարողության): Պողոսն այս տերմինը օգտագործում էր, երբ կիրառում էր Մեպտուլագինտայից մի քանի ՀԿ-յան մի քանի մեջբերումներ (տես՝ Փիլ. 2:11 և Հռոմ. 14:11-ը Եսայի 45:23-ից, և Հռոմ. 15:9-ը Սաղմ. 18:49-ից: Նաև Հռոմ. 10:13-ում դրան առնչվող *homologeō* տերմինը՝ Հովել 2:37-ից):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: CONFESSION

Ա. Հունարենում խոստովանություն կամ դավանություն տերմինների համար կիրառվող այս նույն արմատից երկու տեսակ գոյություն ունի՝ *homologeō/exomologeō*: Բաղադրյալ այս տերմինը կազմված է *homo*՝ միևնույն, *legō*՝ խոսել, և *ex*՝ ինչ-որ բանից դուրս: Հիմնական նշանակությունն է միևնույն բանը ասելը, համաձայնվելը: *Ex*-ը ավելացնում էր հանրորեն հռչակելու՝ հայտարարելու գաղափարը:

Բ. Այս բառախմբի անգլերեն թարգմանություններն են՝

1. փառաբանել
2. համաձայնել
3. հռչակել (տես՝ Մատթ. 7:23)
4. դավանել
5. խոստովանել (տես՝ Եբր. 4:14, 10:23)

Գ. Այս բառախումբը ունի երկու թվացյալ իրար հակասող կիրառություններ՝

1. փառաբանել (Աստծուն)
2. մեղքն ընդունել

Հնարավոր է սա ձևավորվել է մարդկանց կողմից Աստծո սրբության և իրենց մեղավորության հասկացողությունից: Գիտակցել առաջին ճշմարտությունը, նշանակում է գիտակցել երկուսն էլ:

Դ. Այս բառախմբի կիրառությունը ՆԿ-ում հետևյալն է՝

1. խոստանալ (տես՝ Մատթ. 14:7, Գործք 7:17)

2. համաձայնել կամ զիջել ինչ-որ բան (տես՝ Հովհ.1:20, Ղուկ.22:6, Գործք 24:14, Եբր.11:13)
3. փառաբանել (տես՝ Մատթ.11:25, Ղուկ.10:21, Հռոմ.14:11, Եբր.13:15)
4. համաձայնեցնել՝
 - ա. անձի հետ (տես՝ Մատթ.10:32, Ղուկ.12:8, Հովհ.9:22, 12:42, Հռոմ.10:9, Փիլ.2:11, 1 Հովհ.2:23, Հայտն. 3:5)
 - բ. ճշմարտության հետ (տես՝ Գործք 23:8, 1 Հովհ.4:2)
5. հանրության առջև հայտարարել (իրավական նշանակությունը վերաձվել է կրոնական հիմնավորման, տես՝ Գործք 24:14, 1 Տիմ.6:13)
 - ա. առանց մեղքն ընդունելու (տես՝ 1 Տիմ.6:12, Եբր.10:23)
 - բ. մեղքն ընդունելով (տես՝ Մատթ.3:6, Գործք 19:18, Եբր.4:14, Հակ.5:16, 1 Հովհ.1:9)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ «ԸՆԴՈՒՄՆԵԼ», «ՀԱՎԱՏԱԼ», «ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԴԱՎԱՆԵԼ», «ԿԱՆՉԵԼ»:

❖ **«Հայր Աստծո փառքի համար»** Հայր Աստծո կողմից Հիսուսին ուղարկելու նպատակը Նրան երկրպագությունն էր: Այս արտահայտությունը՝ «Աստծո փառքի համար», առնչվում է Փիլ. 1:11 և այստեղ՝ Փիլ. 2:11-ում հավատացյալների ապրելակերպի հետ, նրանց փրկության համար, որը կատարվեց Քրիստոսի գործի միջոցով: Այս նույն բանալի հանդիսացող արտահայտությունը Պողոս երեք անգամ կիրառում է Եփես. 1:3-14-ում եռամեկ Աստծուն ուղղված իր փառաբանության աղոթքում: Ի վերջո Հիսուսը ամբողջ գործությունը, իշխանությունը և փառքը ուղղելու է Հորը, որին էլ պատկանում է (տես՝ 1 Կորնթ. 15:27-28): «Փառք» թեմայի շուրջ ամբողջական գրառման համար տե՛ս Եփես. 1:6-ը:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2:12-30-Ի ՀԱՄԱՐ

- Ա. Փիլ. 2:12-18, ինչպես Փիլ. 2:1-11-ը առնչվում են Քրիստոնեական ապրելակերպին:
- Բ. Փիլ. 2:19-30 առնչվում է Պողոսի օգնականներին՝ Տիմոթեոսին և Եպափրոդիտոսին և նրանց ճամփորդությանը դեպի Փիլիպպե:
- 1. Տիմոթեոս, Փիլ. 2:19-24
- 2. Եպափրոդիտոս, Փիլ. 2:25-30

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2:12-13
¹²Հեռևաբար, իմ սիրելիներ՝, ինչպես միշտ հնազանդ եք եղել, ոչ միայն իմ ներկայությամբ, այլ առավել ևս հիմա՝ իմ բացակայությամբ, ահով ու դողով գործադրեք ձեր փրկությունը. ¹³որովհետև և՛ կամենալը, և՛ կատարելը, Աստված Ինքն է, որ գործում է ձեր մեջ՝ Իր բարեհաճության համաձայն:

2:12-13 Հունարենում սա մի նախադասություն է:

2:12 «Հեռևաբար» Ըստ երևույթին սա կապված է Քրիստոսի խոնարհության և հնազանդության վերաբերյալ նախորդող քննարկման հետ: Փիլ. 2:6-11-ում Քրիստոսի ամենաբարձր օրինակի լույսի ներքո, այս հավատացյալներին աղերսվում էր ապրել (1) խոնարհությամբ և զգուշությամբ՝ Փիլ. 2:1-5, և (2) Քրիստոսի նման՝ Փիլ. 2:14-18:

❖ **«իմ սիրելիներ»** Պողոսն այս եկեղեցին հատուկ էր սիրում (տես՝ Փիլ.4:15-16): Պողոսն այս արտահայտությունը հաճախ էր օգտագործում, նկարագրելու իր ծառայության ներքո գտնվող նորադարձներին (տես՝ Հռոմ. 112:19, 16:8,9,12, 1 Կորնթ. 4:14,17, 10:14, 15:58, 2 Կորնթ. 7:1, 12:19, Եփես. 6:21, Փիլ. 4:1 /երկու անգամ/, Կող. 4:7,9,14, 1 Տիմ. 6:2, 2 Տիմ. 1:2, Փիլիմոն 1:1, 2, 16):

**NASB, NKJV
NRSV, TEV
NJB**

**«ինչպես միշտ հնազանդ եք եղել»
«ինչպես միշտ հնազանդ եք եղել ինձ»
«դուք միշտ հնազանդ եք եղել»**

Տեսքստը չի նշում, թե ում են հնազանդ եղել: Դա կարող է լինել (1) Հայրը/ Որդին/ Հոգին, (2) Քրիստոնեական հավատքը, կամ (3) Պողոսը: Քրիստոսի հնազանդությունը, որը նշվում է Փիլ. 2:8-ում, Փիլիպպեցիներին տրված է օրինակ, որին պետք է հետևեն (տես՝ Ղուկաս 6:46): Այս արտահայտությունը կարող է վերաբերել եկեղեցու կողմից Պողոսի ուսմունքին հնազանդությանը (տես՝ Փիլ. 2:12բ): Քրիստոնեությունը մի գործընթաց է, որը բովանդակում է սպաշխարություն, հավատք, հնազանդություն, ծառայություն և հարատևություն:

❖ **«ոչ միայն իմ ներկայությամբ, այլ առավել ևս հիմա՝ իմ բացակայությամբ»** Քրիստոնեությունը այն է, ինչ մենք կանք, այլ ոչ թե այն ինչ անում ենք: Հավատացյալները չպետք է գործեր կատարեն երևալու համար (տես՝ Փիլ. 1:27, Եփես. 6:6, Կող. 3:22):

❖ **«գործադրեք ձեր փրկությունը»** Այս բայը մաթեմատիկական տերմին է, որը կիրառվում էր իր ավարտին հասած խնդրի համար: Այն ներկա չեզոք սեռի (դեպոնենտ) հրամայական հոգնակի թվի տեսքով է:

12-13 համարներն եղել են աստվածաբանական շատ քննարկումների գլխավոր թեման կապված Աստծո ինքնիշխանության, որը շեշտադրվում է Փիլ. 2:13-ում (տես՝ Փիլ. 1:6) և մարդկանց ազատ կամքի հետ, որի մասին կոչ է արվում Փիլ. 2:12-ում: «Փրկություն» տերմինը Փիլ. 2:12-ում՝

1. վերաբերում է Քրիստոսի հետ հավատացյալի հոգևոր փոխհարաբերությանը: Պողոսը նոր էր նշել Քրիստոնյա դառնալու մասին Փիլ. 2:9-10-ում: Սա մեկ այլ օրինակ է ինքնիշխանության և մարդու սկզբնական և շարունակվող ազատ կամքի միջև առկա լարվածության (տես՝ Փիլ. 2:16):

2. չի վերաբերում հավիտենական հոգևոր փրկությանը, այլ՝

ա. կամ ՀԿ-յան «ֆիզիկական ազատագրմանը»

բ. կամ էլ «ամբողջականությանը», ինչպես նշվում է Փիլ. 1:19-ում:

Փրկության այս առանձնահատկությունը որպես «ամբողջականություն» կարելի է նաև տեսնել Գործք 4:10, 14:9, 27:34-ում: Աստծո նախաձեռնող շնորհքը և զղջացող մարդուց պահանջվող հավատքի պատասխանը, հստակ երևում են Եփես. 2:8-9-ում: Ըստ երևույթին հավատացյալները չեն գործում իրենց փրկության համար, այլ փրկվելուց հետո համագործակցում են Հոգու հետ, որպեսզի ապրեն Քրիստոսանման հասունությամբ (տես՝ Փիլ. 2:14-17, Եփես. 2:10, 5:18): Փրկությունը ամբողջությամբ Աստծուց է և կատարելապես ձրի, սակայն պահանջում է ակտիվ, արժեքավոր, սպաշխարող, շարունակական հավատքի պատասխան (տես՝ Մատթ. 13:44-46):

Համատեքստը դեմ է խոսում անհատականության մեկնությանը՝ Փիլ. 2:12-ում «ձեր» և Փիլ. 2:13-ում «ձեզ»-ի շնորհիվ, և բոլոր բայերը հոգնակի թվով են, որը նկատի ունի Փիլիպպեի ամբողջ եկեղեցուն, ոչ թե որևէ անհատի հոգևոր փրկությունը: Եթե դա վերաբերում էր հոգևոր փրկությանը, ապա հավաքական (տես՝ Փիլ. 1:28) և անող՝ պրոգրեսիվ (տես՝ 1 Կորնթ. 1:18, 15:2, 2 Կորնթ. 2:15) իմաստով: Այս հատվածի ամբողջ նպատակն է եղել քաջալերել նրանց վստահելու Փիլիպպեի եկեղեցու համար Աստծո ներկայությանը և նպատակին (տես՝ Գաղ. 3:4, 1 Կորնթ. 15:2):

❖ **«ահով ու դողով»** Սա ՀԿ-յան դարձվածք էր Աստծո հանդեպ հարգանքի և երկյուղածության համար (տես՝ Սաղմ. 2:11, 119:120): Այն մի քանի անգամ կիրառվում է Պողոսի թղթերում (տես՝ 1

Կորնթ. 2:3, 2 Կորնթ. 7:15, Եփես. 6:5): Հավատացյալները կարիք ունեն հիշելու Աստծո աննկարագրելի գերբնական Սրբության մասին:

2:13 «որովհետև Աստված Ինքն է, որ գործում է ձեր մեջ» Շեշտադրության համար «Աստված» բառը նախադասության մեջ դրված է առաջինը: «Գործել» տերմինը ներկա ներգործական դերբայ է, որը վերաբերում է «շարունակական արդյունավետ գործին» (տես՝ Գաղ. 5:6): Սա Փիլ. 2:12-ից տարբերվող բաղադրյալ է, սակայն միևնույն արմատով: «Ձեր մեջ» արտահայտությունը հոգնակի է և հնարավոր է նշանակի «ձեր միջում», որը կենտրոնանում է Եկեղեցու կյանքում Աստծո գործունեության վրա (տես՝ Կող. 1:27):

- NASB** «և՛ կամենալը, և՛ կատարելը՝ Իր բարեհաճության համաձայն»
- NKJV** «Իր բարեհաճությունը և՛ կամենալը, և՛ անելը»
- NRSV** «և՛ կամենալը և կատարելը նրա բարեհաճության համար»
- TEV** «ձեզ հոժար և կարող դարձնելու հնազանդվելու նրա սեփական նպատակին»
- NJB** «նրա իսկ գթառատ նպատակի համար տալիս է ձեզ մտադրություն և կարողություններ»

Հավատացյալների վերաբերմունքը և գործերը Սուրբ Հոգուց են ծնվում: Փիլ. 2:13ա-ի ներկա ներգործական դերբայը կրկնվում է որպես ներկա ներգործական անորոշ Փիլ. 2:13բ-ում: Սա Ինքնիշխան Աստծո և ուխտ կապող Աստծո միջև հակադրությունն է: Փրկությունը ձրի պարզ է և ամեն բան արժեցող նվիրում: Պողոսը Աստծո շնոհքին անարժան լինելու շատ լավ օրինակ է (տես՝ 1 Կորնթ. 15:10): Այս համատեքստում (տես՝ Գաղ. 3:4, 1 Կորնթ. 15:2) Աստծո կամքն է միաբան, սիրառատ, վկայող, պտղաբեր եկեղեցին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2:14-18
¹⁴Ամեն ինչ արեք առանց տրտունջների և վիճաբանությունների, ¹⁵որ լինեք անարատ ու անվնաս, Աստծո որդիներ, անմեղադրելի՝ այս ծուռ ու խտորյալ սերնդի մեջ, որոնց մեջ լուսատուների պես փայլեցե՛ք աշխարհում, ¹⁶կյանքի Խոսքը ամուր պահելով, որպեսզի ես ուրախանամ Քրիստոսի օրը, որ իզուր չեմ վազել, ո՛չ էլ իզուր եմ աշխատել: ¹⁷Այո՛, եթե ձեր հավատի համար որպես զոհ ու պատարագ էլ ընծայվեմ, ուրախ կլինեմ ու կուրախանամ ձեզ՝ բոլորիդ հետ: ¹⁸Նույն պատճառով դո՛ւք էլ ուրախացեք և ինձ հետ ուրախ եղեք:

2:14-16 Այս համարները Հունարենում մի նախադասություն են:

2:14 «Ամեն ինչ արեք առանց տրտունջների և վիճաբանությունների» Ըստ երևույթին Փիլիպպեի համայնքում տարածայնություններ կային: Արդյո՞ք պատճառը

1. Քրիստոնյա առաջնորդներն էին, որոնք նախանձում էին (տես՝ Փիլ. 1:14-17)
2. երկու կանայք, որոնք իրար հետ կռիվների մեջ էին (տես՝ Փիլ. 4:2-3)
3. սուտ վարդապետները (տես՝ Փիլ. 3:2բ)

անհայտ է, քանի որ տեքստը չի հստակեցնում, թե ովքեր էին տրտունջների առարկան՝ Պողոսը, մյուս Քրիստոնյաները, թե՞ անհավատները :

- 2:15**
- NASB** «որ կարողանաք ձեր անձերով լինել»
- NKJV** «որ կարողանաք դառնալ»
- NRSV, TEV** «որպեսզի դուք կարողանաք դառնալ»
- NJB** «որպեսզի մնաք»

Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի (դեպոնենտ) ստորադասական է: Ինչպես որ հավատացյալները որոշում են փրկվել, այնպես էլ պետք է որոշեն Քրիստոսի համար ապրել: ՆԿ-ը նոր ուխտ է: Հավատացյալն ունի իրավունքներ և պարտավորություններ:

❖ **«անարատ»** Բառացի սա «առանց խարամի» է նշանակում (տես՝ Փիլ. 3:6): Սկզբնապես ՀԿ-ը այն վերագրում է զոհաբերվող կենդանիներին, սակայն ժամանակի ընթացքում սկսեց կիրառվել մարդկանց համար՝ այլաբանորեն (տես՝ Նոյ՝ Ծննդ. 6:9,17 և Հոբ՝ Հոբ 1:1): Այն վերագրված է Հիսուսին Եբր. 9:14-ում և 1 Պետ. 1:19-ում: Այն համարվում է Քրիստոնեական կյանքին անդրադառնալու ևս մի կերպ: Սա Աստծո կամքն է Իր ժողովրդի համար (տես՝ Ղևտ. 19:2, 2 Օր. 18:13, Մատթ. 5:48, 1 Պետ. 1:16): Աստված ուզում է, որ Ինքը արտացոլվի հավատացյալների մեջ («Աստծո զավակների», տես՝ Եփես. 1:4, 6:27, Կող. 1:22, Հուդա 24) և դրանով կորած աշխարհը քաշի դեպի Իրեն (տես՝ Փիլ. 2:15): Տե՛ս Հատուկ Թեմա. Անարատ, Կող. 1:22-ում:

❖ **«անվնաս»** Սա գինեգործության մեջ կիրառվող տերմին է «անխառն գինու» համար: Այն օգտագործվում է ՆԿ-ում այլաբանորեն՝ բարոյական մաքրության համար (տես՝ Մատթ. 10:16, Հռոմ. 16:19):

❖ **«անմեղադրելի»** Սա կիրառվում էր Սեպտուագինտայում (LXX) զոհաբերության կենդանիների համար: ՆԿ-ում այս տերմինը շատ հաճախ կիրառվում է փոխաբերական իմաստով, մատնացույց անելու բարոյական շիտակությունը (տես՝ Եփես. 1:4, Կող. 1:22, Հուդա 24, Հայտն. 14:5,6): Սա չի վերաբերում անմեղությանը, այլ հասունությանը:

❖ **«այս ծուռ ու խոտորյալ աշխարհի մեջ»** 2 Օրինաց 32:5-ում այս արտահայտությունը վերաբերում է Իսրայելին, սակայն այս համատեքստում այն վերաբերում է անհավատ աշխարհին: Սա ՆԿ-յան հեղինակի կողմից ՀԿ-յան հաստատումները տիեզերականացնելու՝ ամբողջ մարդկությանը համապատասխան դարձնելու մեկ այլ օրինակ է: «Ծուռ» և «խոտորյալ» տերմինների արմատը կապված է Աստծո արդարության ՀԿ-յան հասկացության հետ, որը նկարագրվում է որպես «չափման եղեգ» (ուղիղ քանոն): Ցանկացած շեղում Նրա չափանիշներից նկարագրվում էր «ծուռ» կամ «թեքված» տերմիններով: Այս տերմինները անգլերենում թարգմանվում են որպես «մեղք», «անիրավություն» կամ «օրինազանցություն»: Ուշադրություն դարձրե՛ք, որ այս համատեքստում Եկեղեցին է, որ կանչված է խավարած աշխարհում լույս լինելու:

**NASB
NKJV
NRSV
TEV**

**«լույսերի պես եք երևում աշխարհում»
«լույսերի պես փայլում եք աշխարհում»
«լուսատուների պես փայլում եք աշխարհում»
«Դուք պետք է նրանց մեջ փայլեք աստղերի պես, որ լույս են տալիս երկնքում»
«աշխարհում նրանց մեջ փայլելով պայծառ աստղերի պես»**

Ուշադրություն դարձրեք հավաքական համատեքստ արտահայտող հոգնակի թվերին: Սա չի վերաբերում անհատների, ինչպես Դանիել 12-ում, այլ եկեղեցիներին՝ որպես մի ամբողջություն (տես՝ Փիլ. 2:12): Գոյություն են ունեցել այս տերմինի երկու հավանական բացատրություն՝

1. որպես Դանիել 12:3-ի հետ առնչվող, որտեղ հավատացյալները նկարագրվում են երկնքում լուսատուների կամ փայլող աստղերի պես
2. որպես մարդիկ, որոնք լույս են տանում (այսինքն՝ ավետարանը, Փիլ. 2:16-ի) աշխարհին (*kosmos*):

Մատթ. 5:14-16-ում հավատացյալները պետք է լինեն լույսը կրողները՝ Հիսուսին մեզ օրինակ ունենալով (տես՝ Հովհ. 8:12, Եփես. 5:14):

2:16

**NASB, NKJV, NRSV
TEV
NJB**

**«Կյանքի Խոսքն ամուր պահելով»
«որպեսզի նրանց տաք կյանքի պատգամը»
«Առաջարկելով դրան կյանքի Խոսքը»**

Սա ներկա ժամանակի դերբայ է, որը կարելի է երկու կերպ մեկնաբանել՝ (1) «ամուր պահել», նկատի ունենալով հավատացյալների հարատև հավատարմությունը կամ (2) «առաջ պահելով», նկատի ունենալով հավատացյալներին որպես վկաներ: Երկուսն էլ համապատասխանում են այս համատեքստին (հտկա.՝ Փիլ. 2:12):

❖ **«Քրիստոսի օրը»** Սա վերաբերում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը: Շատ նման մի արտահայտություն է կիրառվում է Փիլ. 1:6, 10-ում: Հաճախ ՆԿ-ում Երկրորդ Գալուստը կիրառվում է որպես մոտիվացիա ներկայիս Քրիստոնեական կյանքի համար: Տես Հատուկ Թեմա Փիլ. 1:10-ում:

❖ **«որպեսզի ես ուրախանամ»** Փիլիպպեցի Քրիստոնյաների (այսինքն՝ եկեղեցիների) աստվածահանո կյանքերը ապացույց էին Պողոսի առաքյալ լինելուն (տես՝ Փիլ. 4:1, 1 Թեսաղ. 2:19-20):

❖ **«իզուր չեմ վազել, ո՛չ էլ իզուր եմ աշխատել»** Բառացի «որ իզուր վազած չլինեմ, ո՛չ էլ իզուր աշխատեմ» (այսինքն՝ արդյունավետ, վերարտադրող եկեղեցիներ հաստատելու նպատակով): Սրանք երկու անորոշ կատարյալ ժամանակի բայեր են: Առաջին տերմինը՝ «վազել», կիրառվում էր եզիպտական պապիրուսի մեջ ջրավազքի համար, առանց որևէ նպատակի: Այս համատեքստում «իզուր» բառը պետք է որ վերաբերի նրանց Քրիստոսակերպ հասունությանը (ոչ թե փրկությանը), քանի որ նրանք փայլում են Քրիստոսի համար: Պողոսը հաճախ էր արտահայտում իր անհանգստությունը նոր եկեղեցիների հասունության և հարատևության համար, կիրառելով նմանատիպ փոխաբերություններ (տես՝ Գաղ. 2:2, 4:11, 1 Թեսաղ. 2:1, 3:3,5): Պողոսը հաճախ իր ծառայության մասին խոսում էր ինչպես մարզական մրցույթի մասին (տես՝ 1 Կորնթ. 9:24-27, 1 Տիմ. 6:12, 2 Տիմ. 4:7):

2:17, 18 Այս համարները պարունակում են չորս տերմիններ, որոնք սովորաբար թարգմանվում են «ուրախանալ»: Սա ցույց է տալիս, որ անգամ մահվան ճանապարհին լինելով (երբ բանտարկության մեջ էր սպառնում էր հռոմեական մահապատիժ), Պողոսը ուրախ էր ծառայել Քրիստոսին և նրանց (այսինքն՝ իր հիմնադրած եկեղեցիներին): Նա հորդորում է նրանց էլ նույնը անել: Հավատացյալները պետք է իրենց կյանքերը տան ուրիշների համար, ինչպես որ Քրիստոսը տվեց Իր կյանքը իրենց համար (տես՝ Փիլ. 2:5-11, 2 Կորնթ. 5:13-14, Գաղ. 2:20, 1 Հովհ. 3:16):

2:17 «Եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ նրա գրականական նպատակների համար: Սա չպետք է հասկացվի որպես թե Պողոսը սպասում էր իր մահապատժին: Այս նույն գրքում նա իր ազատման հույսն ու ակնկալիքն էր արտահայտում (տես՝ Փիլ. 1:25, 2:24):

**NASB, NKJV
NRSV
TEV
NJB**

**«ես որպես հեղման նվիրաբերություն եմ թափվում»
«ես թափվում եմ որպես հեղման գոհ»
«իմ կյանքի արյունը թափվելու է գոհի պես»
«իմ արյունը թափվելու է որպես հեղման նվիրաբերում»**

Սա ներկա կրավորական սահմանական եղանակ է: Պողոսն իրեն դիտարկում է որպես գոհաբերություն հանուն Փիլիպպեցիների հավատքի (այսինքն՝ Հեթանոսների, տես՝ Հռոմ. 15:16): Պողոսն այս ծառայությանը վերաբերվում է որպես գոհի մի քանի անգամ (տես՝ Հռոմ. 15:16, 2 Տիմ. 4:6): Այս հունարեն տերմինը արտացոլում է ՀԿ-յան գինու հեղման համար տերմինը (տես՝ Ելից 29:38-41, Թվոց 15:3-10):

❖ «**ձեր հավատի համար որպես զոհ ու պատարագ**» Պողոսն իր կյանքն ու ծառայությունը տեսնում էր որպես Աստծուն զոհաբերություն (տես՝ Հռոմ. 12:1-2): Նա նվիրաբերում էր հեթանոսներին Աստծուն (տես՝ Հռոմ. 15:16): Հիսուսը զոհաբերվեց ամբողջ մարդկության համար (տես՝ Եսայի 53, Մարկոս 10:45, 2 Կորնթ. 5:21, Եփես. 5:2): Հավատացյալները պետք է ընդօրինակեն Հիսուսին և Պողոսին (տես՝ 4:19):

«Ծառայություն» թարգմանված հունարեն բառը (*leitourgia*) ներմուծվել է անգլերեն լեզու որպես «liturgy» (հայերեն՝ պատարագ): Այն կիրառվում էր Սեպտուագիտայում (LXX) քահանայի համար, որը մատակարարում է զոհը: Սա կարող է լինել Պողոսի ավետարանի համար անձնագոհության մեկ այլ ակնարկ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ 2:19-3:1

¹⁹Բայց հույս ունեմ Տեր Հիսուսով, որ Տիմոթեոսին շուտով կուղարկեմ ձեզ մոտ, որ ես էլ հանգիստ լինեմ, երբ իմանամ ձեր վիճակի մասին: ²⁰Որովհետև նրա պես սրտակից մեկը չունեմ, որ անկեղծաբար ձեր վիճակի մասին հոգ տանի: ²¹Քանի որ բոլորն իրենց շահն են փնտրում, ոչ թե՛ Հիսուս Քրիստոսի: ²²Բայց դուք գիտեք նրա փորձված լինելը, որ ինչպես զավակը իր հոր հետ, այնպես նա ինձ հետ ծառայեց ավետարանին: ²³Ուրեմն հույս ունեմ, որ նրան շուտով կուղարկեմ, երբ վիճակս պարզ լինի: ²⁴Բայց վստահ եմ Տիրոջով, որ ես ինքս էլ շուտով կգամ: ²⁵Միայն թե հարմար համարեցի, որ ձեզ մոտ ուղարկեմ Եպափրոդիտոսին՝ իմ եղբորը և գործակցին, և մարտընկերոջը, որին ուղարկել էիք իմ կարիքները հոգալու համար: ²⁶Քանի որ ինքն էլ ձեզ բոլորիդ տեսնելու մեծ ցանկություն ունի և մտահոգված է, որ դուք լսել եք իր հիվանդության մասին: ²⁷Եվ իրոք, նա մահամերձ հիվանդ էր, բայց Աստված ողորմեց նրան: Ոչ միայն նրան, այլ նաև՝ ինձ, որ տրտմությանս վրա տրտմություն չավելանա: ²⁸Դրա համար շտապ ուղարկեցի նրան, որ դուք նրան նորից տեսնելով՝ ուրախանաք, և իմ տրտմությունն էլ պակաս լինի: ²⁹Ուրեմն ամենայն ուրախությամբ ընդունեցե՛ք նրան Տիրոջով ու այդպիսիներին պատվեցե՛ք, ³⁰որովհետև Քրիստոսի գործի համար մինչև մահվան դուռը գնաց՝ իր կյանքը վտանգելով, որպեսզի ձեր ծառայության պակասն ինձ համար ինքը լրացնի: ^{3:1}Վերջապես, իմ եղբայրներ, ուրախ եղե՛ք Տիրոջով. նույն բաները ձեզ գրելը ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար ապահովություն է:

2:19 «Բայց ես հույս ունեմ Տեր Հիսուսով... կուղարկեմ» Պողոսը գիտեք, որ իր կյանքն ու ծրագրերը իր սեփականը չէին, այլ վերահսկվում էին Աստծո կամքով (տես՝ Փիլ. 2:24, 1 Կորնթ. 4:19, Հակ. 4:13-17):

❖ «**որ ես էլ քաջալերվեմ /հանգիստ լինեմ/**» Սա Ներկա ժամանակի ներգործական սեռի ստորադասական եղանակ է: Այս տերմինը կիրառվում է «հրաժեշտի» կամ «հաջողության» իմաստով և գտնվել է շատ հինավուրց տապանաքարերի վրա: Սա ՆԿ-ում միակ կիրառությունն է և կարծես թե գործածվում է «ուրախության» իմաստով (NRSV):

2:20	
NASB	«բարեհոգի»
NKJV	«համախոհ»
NRSV	«նրա պես»
TEV	«սրտակից»
NJB	«անկեղծությամբ հոգ է տանում քո բարեկեցության համար»

Սա բառացի «սրտակից» (*isopsuchos*) տերմինն է: Սա ենթադրում է, որ Տիմոթեոսը Պողոսի պես միևնույն սերն էր տաժում Փիլիպպեի եկեղեցու հանդեպ: Նմանատիպ մի բաղադրյալ՝ «համախոհ» (*sumpsuchos*) կիրառվում է Փիլ. 2:2-ում:

NASB, NRSV	«որն անկեղծաբար ձեր բարեկեցության համար անհանգստանում է»
NKJV	«որ անկեղծաբար ձեր վիճակի մասին հոգ տանի»

Սկզբնապես այս տերմինը նշանակում էր «օրինապես ծնված», սակայն ժամանակի ընթացքում սկսեց կիրառվել փոխաբերական իմաստով՝ «իրական, իսկական» բառի համար: «Անհանգստանալ» տերմինը հայտնվում է Փիլ.4:6-ում և նշանակում է «անհանգիստ, մտահոգ» և ունի բացասական նշանակություն: Այս համարում դրական իմաստ ունի:

2:21 Հայտնի չէ, թե ում նկատի ունենում էր Պողոսը, սակայն ակնհայտ է, որ խոսքը գնում էր իր ծառայակիցների մասին: Սա հավանաբար կապ ունենում էր Հռոմի եկեղեցում նախանձ քարոզիչների հետ (տես՝ Փիլ.1:14-17): Ուրիշներն էլ համարում են, որ կապ ունի 3-րդ գլխի սուտ վարդապետների հետ: Այդուհանդերձ սա անսովոր է թվում, քանի որ Պողոսը նրանց չէր վերագրի «Քրիստոսի քարոզիչներ» անվանումը (տես՝ Փիլ.1:15): Պողոսի կողմից անդրադարձ կատարած խառը առաջնայնություններ ունեցող մարդկային տեսակի լավ օրինակ կարելի է տեսնել Դեմասի մեջ (տես՝ 2 Տիմ.4:10): Անձնական շահը եղել է, և կա պարբերաբար կրկնվող խնդիր (տես՝ 1 Կորնթ. 10:24, 13:5, Փիլ.2:4):

2:22 «նրա փորձված լինելը» Այս տերմինը գործածվում էր մետաղադրամների իսկությունը ստուգելու համար փորձելիս: Տիմոթեոսը եղել էր Պողոսի հետ Փիլիպպեում, ինչպես որ արձանագրված է Գործք 16 և 20-ում: Նա քաջ ծանոթ էր այս եկեղեցուն և սրտանց սիրում էր նրանց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ ԲԱՌԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: GREEK TERMS FOR TESTING AND THEIR CONNOTATIONS

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն դիտավորյալ ինչ-որ մեկին փորձելու իմաստը.

1. Dokimazō, Dokimion, Dokimasia

Այս տերմինը մետաղագործական տերմին է՝ ինչ-որ բանի իսկությունը (այսինքն՝ այլաբանորեն ինչ-որ մեկին) կրակով փորձելով (տես՝ Հատուկ Թեմա. Կրակ): Կրակը ի հայտ է բերում իրական մետաղը և վառում է (այսինքն՝ մաքրում) մետաղախարամը՝ անպետք մետաղը: Այս ֆիզիկական գործընթացը Աստծո համար /և, կամ Սատանայի ու մարդկանց համար/ դարձավ միմյանց փորձելիս օգտագործվող գեղեցիկ դարձվածք: Այս տերմինը գործածվում է փորձելու միայն դրական իմաստով, երբ այն ընդունելի է (տես՝ Հատուկ Թեմա. Աստված փորձում է Իր ժողովրդին /ՀԿ/):

ՆԿ-ում այն կիրառվում է, երբ փորձվում են՝

- ա. եզները՝ Ղուկ.14:19
- բ. մենք՝ 1 Կորն.11:28
- գ. մեր հավատքը՝ Հակ.1:3
- դ. նույնիսկ Աստված՝ Եբր.3:9

Այս փորձերի արդյունքները համարվում էին դրական (տես՝ Հռոմ.1:28, 14:22, 16:10, 2 Կորն.10:18, 13:3,7, Փիլ.2:27, 1 Պետ.1:7), ուստի այս տերմինը փոխանցում է այն գաղափարը, որ մարդը փորձվել է և ճանաչվել՝

- ա. արժանի
- բ. բարի
- գ. անկեղծ
- դ. թանկագին
- ե. պատվարժան

2. Peirazō, Peirasmus

Այս տերմինը հաճախ ունի հանցանքը կամ մերժվածությունը գտնելու նպատակով քննության նշանակություն: Այն հաճախ է գործածվում անապատում Հիսուսի փորձության հետ կապված:

- ա. Այն փոխանցում է Հիսուսին թակարդը զցելու փորձի իմաստը (տես՝ Մատթ.4:1, 16:1, 19:3, 22:18, 35, Մարկ.1:13, Ղուկ.4:38, Եբր.2:18):
- բ. Այս (*peirazōn*) տերմինը Մատթ.4:3; 1 Թեսաղ.3:5-ում կիրառվում է որպես Սատանայի անունը:
- գ. Կիրառությունը՝
 - 1) Այն կիրառում էր Հիսուսը մեզ զգուշացնելով չփորձել Աստծուն (տես՝ Մատթ. 14:7, Ղուկ.4:12) [կամ Քրիստոսը, տես՝ 1 Կորն.10:9]:
 - 2) Այն նաև արտահայտում է ինչ-որ մի բան անելու փորձ, որը ձախողվել է (տես՝ Գործք 9:20, 20:21, Եբր.11:29):
 - 3) Այն կիրառվում է հավատացյալների փորձությունների և գայթակղությունների իմաստով (տես՝ 1 Կորն.7:5, 10:9, 13, Գաղ.6:1, 1 Թեսաղ.3:5, Եբր.2:18, Հակ.1:2, 13, 14, 1 Պետ.4:12, 2 Պետ.2:9):

❖ **«ինչպես զավակն իր հոր հետ /ծառայեց/»** Այսպես էր Պողոսը նկարագրում բարի, ազնիվ և հավատարիմ օգնականին (տես՝ Տիտոս 1:4): Սակայն Տիմոթեոսի դեպքում, այն նաև նշանակում էր նորա դարձ (տես՝ 1 Տիմ. 1:2, 2 Տիմ. 1:2):

2:23 «Երբ վիճակս պարզ լինի» Պողոսը իր օրինական վիճակի վերաբերյալ շուտով սպասում էր որոշակի պատասխանի, սակայն նա դեռ վստահ չէր արդյոք իրեն մահապատժի կենթարկելին, թե կկարողանար վերադառնալ և այցելել նրանց: Պողոսի բանտի նամակների հերթականությունը կարծես թե հետևյալ կերպ էր՝ (1) Կողոսացիներ, Եփեսացիներ և Փիլիմոնը դատավարության սկզբում և (2) Փիլիպպեցիների նամակը բանտարկության ավարտին մոտ:

2:24 «Բայց վստահ եմ» Սա վաղակատար ներգործական սահմանական է՝ կիրառված «վստահ կամ համոզված լինելու» իմաստով (տես՝ 2 Կորնթ. 2:3, Եբր. 13:18): Պողոսի վստահությունը Տիրոջ վրա էր (Փիլ. 2:24), Սուրբ Հոգու վրա (1:19բ) և նրանց աղոթքների (1:19ա): Պողոսը շատ ավելի վստահություն ուներ բանտից իր ազատման համար այս գրքում, քան Կողոսացիների կամ Եփեսացիների:

2:25 «համարեցի» Սրանք էպիստոլար՝ նամակագրական անորոշ կատարյալներ են: Պողոսը գրում էր այնպես, կարծես թե արդեն արել էր դա:

❖ **«հարմար»** Սա շատ ուժեղ հունարեն բառ է (տես՝ Գործք 1:24, 13:46, 2 Կորնթ. 9:5, Եբր. 8:3): Նախադասության մեջ այն դրված է սկզբից շեշտադրության համար:

❖ **«Եպափրոդիտոս»** Նրա անունը կապված է Աֆրոդիտե աստվածուհու հետ: Նա նույն Եպափրաս անունով մարդը չէ, որը նշվում է Կող. 1:7, 4:12-ում, Փիլիմոն 23-ում, չնայած որ Եպափրասը Եպափրոդիտոս անվան կրճատ ձևն է:

❖ **«իմ եղբորը և գործակցին, և մարտնչներոջը»** Պողոսն այս մարդուն համարում էր որպես մտերիմ ծառայակից: Ըստ երևույթին նա ուղարկվել էր Փիլիպպեցիների կողմից, որպեսզի դրամական նվիրատվություն բերեր բանտում գտնվող Պողոսին և մնար նրան օգնելու համար: Մինչ նա այնտեղ էր՝ մահամերձ հիվանդանում է (Փիլ. 2:27): Պողոսը վերադարձնում էր նրան իր տնային եկեղեցուն և շնորհակալություն հայտնում նրանց Եպափրոդիտոսին ուղարկելու համար: Պողոսը չէր ուզում, որ եկեղեցին բարկանար իր վրա, քանի որ նա շուտ էր վերադարձնում նրան:

❖ **«որին ուղարկել էիք իմ կարիքները հոգալու համար»** «Ուղարկել» բառը «առաքյալ» տերմինն է, որը նշանակում է «ուղարկված»: Այստեղ այն կիրառված է ոչ տեխնիկական իմաստով (տես՝ Փիլ.

4:18, 2 Կորնթ. 8:23): Հիշե՛ք, որ համատեքստն է որոշում բառի նշանակությունը, ոչ թե բարբառը, բառարանը:

2:26 «քանի որ ինքն էլ ձեզ բոլորիդ տեսնելու ցանկություն ունի» Սա ուժեղ տերմին է, որ կիրառվում է Պողոսի այս եկեղեցին տեսնելու փափագի համար, որ նշված է Փիլ. 1:8 և 4:1-ում: Եպափրոդիտոսը ոչ միայն ֆիզիկապես էր հիվանդացել, այլ նաև կարոտում էր իր հայրենի տունը:

NASB, NKJV, NRSV
TEV
NJB

«մտահոգված էր»
«շատ տխուր էր»
«անհանգստանում էր»

Այս տերմինը Եզիպտոսում Կոյնե հունարեն պապիրուսի մեջ հայտնաբերված մի կիրառության համաձայն կարող է նշանակել «կարոտախտ»: Այստեղ նկարագրվում է Պողոսի մտատանջությունն այն մասին, որ Եպափրոդիտոսի ֆիզիկական հիվանդության լուրը հասել էր Փիլիպպեի եկեղեցի: Այս նույն տերմինը օգտագործվում է Գեթսեմանի պարտեզում Հիսուսի տառապանքը նկարագրելիս (տես՝ Մատթ. 26:37, Մարկ. 14:33):

2:27 «նա մահամերձ հիվանդ էր» Ըստ երևույթին Պողոսը ի վիճակի չի եղել նրան բուժելու (տես՝ Փիլ. 2:30): Դժվար է հասկանալ, թե երբ և ինչպես էր Առաքյալը կիրառում բժշկության պարզևր և թե ինչու որոշ դեպքերում նրանք չէին կարողանում կիրառել այն (տես՝ 2 Կորնթ. 12, 2 Տիմ. 4:20): Բժշկությունը ավտոմատ չէ: Արդյո՞ք այն բոլոր ժամանակակից քարոզիչները, որոնք պնդում են, որ Աստված ցանկանում է, որ բոլորը բժշկվեն, իրո՞ք հավատում են, որ Պողոս Առաքյալն այս դեպքում չուներ բավականաչափ հավատք: Հավատքը աստվածային բժշկության բանալին չէ, այլ Աստծո կամքը և ծրագիրը այդ մարդկանց համար:

Պողոսը ուզում էր փիլիպպեցիներն իմանային, որ Եպափրոդիտոսը իսկապես լուրջ հիվանդ էր: Հավանաբար Փիլիպպեի եկեղեցում ոմանք կտխրեին, որ նա շուտ էր վերադառնում տուն (տես՝ Փիլ. 2:28-30):

2:30 «իր կյանքը վտանգելով» Սա անորոշ կատարյալ չեզոք դերբայ է, որը բառացի նշանակում է «խաղալով»: Այն պետք է որ վերաբերի նրա հիվանդությանը: Պողոսը կիրառում է հունարեն «հոգի» (*psychē*) տերմինը՝ նկատի ունենալով Եպափրոդիտոսի կյանքը: Աստվածաշունչը չի հետևում հունարեն այս հասկացությանը, որ մարդիկ ունեն «անմահ հոգի», այլ եբրայերենի այն հասկացությանը, որ մարդիկ «կենդանի հոգի» են (տես՝ Ծննդ. 2:7): Ֆիզիկական մարմինը երկրավոր էության արտաքին սահմանն է: Մարդիկ այս մոլորակի հետ կապ ունեն ինչպես բոլոր կենդանիները, սակայն նրանք կապ ունեն նաև Աստծո հետ: Սակայն մարդկային էակները կազմում են միաբանություն, ոչ թե երկատվածություն կամ եռատվածություն՝ տրիխոտոմիա (տես՝ 1 Թեսաղ. 5:23, Եբր. 4:12): Այս միաբանությունը ՆԿ-ում քննարկվում է հակադրելի եղանակներով՝

1. հին մարդ – նոր մարդ
2. արտաքին – ներքին
3. ներկա դարաշրջան – գալիք դարաշրջան
4. մարմին – հոգի
5. հարության կյանք – հարության օր

Զգուշացե՛ք տեքստային ապացույց հանդիսացող աստվածաբանությունից, որը ընտրում է միայն մեկ կամ երկու համար ամբողջ գրականական համատեքստից և պնդում, որ դրանք «բանալի» են Աստվածաշնչի մնացած մասը մեկնելու համար: Եթե Սուրբ Գրերի մեկնության բանալին եռակազմ մարդն է (հոգի, շունչ, մարմին), ապա որտե՞ղ է հստակ ուսմունքն այդ մասին Հիսուսից կամ Պողոսից: Ցանկացած մարդ կարող է վերցնել մի առանձին համար և դա հռչակել որպես բանալի խոսք: Դա կնշանակեր, որ Աստծո ճշմարտությունը համընդհանուր մարդկության համար հստակ գրված չէ, այլ միայն մի խումբ էլիտայի համար՝ այս «բանալի» համարների կամ նպատակների ծածուկ գիտությամբ (Գնոստիցիզմ): Մեկնաբանության նմանատիպ մոտեցումը ժամանակակից Բրիտոնություն մեջ աղետ է:

NASB
NKJV

«լրացնելու այն, ինչ թերի էր ձեր ինձ ծառայության մեջ»
«որպեսզի ձեր ծառայության պակասն ինձ համար ինքը
լրացնի»

NRSV

«լրացնելու այն ծառայությունները, որ դուք չկարողացաք
ինձ մատուցել»

TEV

«որպեսզի ինձ ցուցաբերի այն օգնությունը, որը դուք
ինքներդ չկարողացաք»

NJB

«կատարի այն պարտավորությունը իմ հանդեպ, որը դուք
չկարողացաք կատարել»

Անգլերենում սա ինչ-որ տեղ բացասական հնչերանգ ունի, սակայն դա հունարեն մի դարձվածք էր, որը ցույց է տալիս դրական ցանկությամբ հանդերձ հնարավորության պակասը (տես՝ Փիլ. 4:10, Հռոմ. 1:10):

3:1 «Վերջապես» Բառացի սա նշանակում է «մնացածի համար» (*loipon*): Պողոսը հաճախ էր օգտագործում այս տերմինը, որով անցում էր կատարում հաջորդ թեմային, սովորաբար նամակի ավարտին (տես՝ 2 Կորնթ. 13:11, Եփես. 6:10, 1 Թեսաղ. 4:8, 2 Թեսաղ. 3:1):

ՆԿ-ի մեկնաբանության մեջ մի նոր տեղեկաց կա, որը կոչվում է «քիզված», որը փորձում է գտնել փոխակերպված ուրվագծի տեսակը (օր՝ A, B, C, B, A): Չուզահեռներ տանելու այս ձևաչափը հայտնի է ՀԿ-ից և շատերը պնդում են, որ այն տարածված էր նաև հունական մտածելակերպի մեջ: Կարծես թե Պողոսը հաճախ ներկայացնում է այս կազմության զուգահեռների միջանկյալ ճշմարտությունը:

❖ **«ուրախ եղեք Տիրոջով»** Սա կրկնվող թեմա է: Ուրախացե՛ք տառապանքի մեջ, ուրախացե՛ք փրկության համար, ուրախացե՛ք Նրանով:

❖ **«նույն բաները ձեզ գրելն ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար ապահովություն է»** Գլխավոր ճշմարտությունները կարիք ունեն շեշտադրելու՝ ընդգծելու համար կրկնել: Պողոսը պետք է որ այս բաները նրանց ասած լինեք բանավոր կերպով, երբ Փիլիպպեում էր, և հավանաբար գրել էր նրանց իր նախորդ նամակում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք Փիլ. 2:12-13-ի նշանակությունը (թե՛ համատեքստային և թե՛ աստվածաբանական):
2. Ինչո՞ւ էին փիլիպպեցի Քրիստոնյաները տրտնջում և վիճում (Փիլ. 2:14):
3. Ինչո՞ւ էին Պողոսի ծառայակիցները դիտարկվում որպես խառը շահեր հետաքրքրություններ ունեցողներ (Փիլ. 2:21):
4. Ինչո՞ւ Պողոսը չկարողացավ բուժել Եպափրոդիտոսին: